Արձանագրություն N 2

2023 թվականի առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի (հակահեմոֆիլիկ) ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2023/16» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «27» «Հունվարի» 2023թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Հ. Խուրշուդյան
Հանձնաժողովի անդամներ	Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Խուրշուդյան)

Ընդունել ի գիտություն, որ 02.12.22թ. հրապարակվել է հրավեր armeps.am համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի հունվարի 4-ին, ժամը 12:00-ին:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ	tender@mlnpharm.am	02567316
2	«Ֆարմատեք» ՓԲԸ	narine.muradyan@pharmatech.am	01818051

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Խուրշուդյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Խուրշուդյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, սակայն գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացրած իրենց կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) որոշեց համաձայն 04.05.2017թ. ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված

կարգի 41-րդ և հրավերի 8.9 կետերի՝ 05.01.2023թ. մեկ աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը՝ տալով շտկման հնարավորություն մասնակիցներին և գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի միջոցով ծանուցեց երկու մասնակիցներին նշված ժամկետում շտկել իրենց կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը), մասնավորապես շտկել ֆիրմային անվանումները, դեղաչափերը, արտադրողի անվանումները, ինչպես նաև առաջարկվող դեղերի չգրանցված տարբերակների համար ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող պահանջվող տեղեկանքը:

Շտկման համար սահմանված ժամկետի ավարտին 09.01.2023թ. «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ուղարկվել է պահանջված շտկված ապրանքի ամբողջական նկարագիրը, իսկ ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող պահանջվող տեղեկանքի ներկայացման մասով ուղարկվել է գրություն, առ այն որ 2 աշխատանքային օրվա ընթացքում վերջինս կներկայացվի և 13.01.2023թ. պահանջվող տեղեկանքը ներկայացվել է: Իսկ «Ֆարմատեք» ՓԲԸ-ի կողմից պահանջվող շտկման ենթակա ապրանքի ամբողջական նկարագիրը ուղարկվել է սահմանված ժամկետից ուշ՝ 10.01.2023թ. և ներկայացվել է գրություն առ այն, որ բոլոր 3 չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկները ներկայացվել են սխալ՝ տեխնիկական սխալի պատճառով գնային առաջարկները կազմվել են սխալ (տեղեկանքները և գրությունները կցվում են):

Որոշվեց՝ «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար, իսկ «Ֆարմատեք» ՓԲԸ-ի հայտը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Հ. Խուրշուդյան)

Մասնակիցների կողմից առաջարկած գները ներկայացվում են կից ֆայլով (excel):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Խուրշուդյան)

(Հ. Խուրշուդյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Խուրշուդյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ և 42-րդ կետերի պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2023/16» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մաով և կնքել պայմանագիր՝

- «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ը՝ 214,702,950 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2023/16» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 31.01.2023թ.-ից մինչև 09.02.2023թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Խուրշուդյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

2023 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք հակահեմոֆիլիկ դեղերի վերաբերյալ վերջնական գներով

ՀՀ դրամ

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Ֆարմատեկ» ՓԲԸ					«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Արյան մակարդման VIII գործոն	2,200	27,600.00	60,720,000	41,624,000	8,324,800	49,948,800	18,920.00	22,704.00	49,082,000	9,816,400	58,898,400	22,310.00	26,772.00
2	Արյան մակարդման IX գործոն	300,000	88.00	26,400,000	14,190,000	2,838,000	17,028,000	47.30	56.76	21,340,000	4,268,000	25,608,000	71.13	85.36
3	Արյան մակարդման VIII գործոն Վոն Վիլոբրանդի	550,000	249.18	137,049,000	49,665,000	9,933,000	59,598,000	90.30	108.36	108,497,125	21,699,425.0	130,196,550.0	197.27	236.72

ՄԼՆ Ֆարմ MLN Pharm

ք. Երևան 0015,
Մ.Մաշտոցի պող.2 տ.39
Հեռ. (+37410) 52-90-72
Էլ. փոստ: info@mlnpharm.am

Yerevan 0015
M.Mashtots ave. 2 un.39,
Phone (+37410) 52-90-72
E-mail: info@mlnpharm.am

N 604
05.01.2023

ՀՀ Առողջապահության նախարարության
կողմից հայտարարված ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2023/16
ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի
քարտուղար՝ Հասմիկ Սարգսյանին

Հարգելի տիկին Սարգսյան,

Խնդրում ենք «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2023/16» ծածկագրով մրցույթի շրջանակներում ներկայացված հայտի շտկում կատարելու համար տրամադրել 2 աշխատանքային օր՝ հաշվի առնելով առաջիկա հանգստյան օրերի գրաֆիկը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքներով,

«Մ.Լ.Ն ֆարմ» ՍՊԸ տնօրեն՝ Հ. Վասիլյան

«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
«НАУЧНЫЙ ЦЕНТР ЭКСПЕРТИЗЫ ЛЕКАРСТВ И МЕДИЦИНСКИХ ТЕХНОЛОГИЙ ИМЕНИ АКАДЕМИКА ЭМИЛЯ ГАБРИЕЛЯНА» АОЗТ
«SCIENTIFIC CENTRE OF DRUG AND MEDICAL TECHNOLOGY EXPERTISE AFTER ACADEMICIAN EMIL GABRIELYAN» CJSC

Կոմիտաս պող. 49/5, Երևան 0051, Հայաստան
пр. Комитаса 49/5, Ереван 0051, Армения
49/5 Komitas aven., Yerevan 0051, Armenia

Tel.: (+374 60) 83-00-73, (+374 10) 23-16-82, 23-08-96
E-mail: admin@pharm.am
Web: www.pharm.am

04/104-23

13.01.2023

Մ.Լ.Ն Ֆարմ ՍՊԸ, ՀՀ

Տնօրեն Հ. Վասիլյանին

Էլ. փոստ՝ info@mlnpharm.am

Հարգելի պարոն Վասիլյան,

Ի պատասխան Ձեր 2023 թվականի հունվարի 12-ի գրության՝ տրամադրվում է տեղեկանք այն մասին, որ ներկայացված (անգլալեզու փաթեթներով).

Հեմատե Պ դեղափոշի և լուծիչ ներարկման կամ կաթիլաներարկման լուծույթի, 500ՄՄ ՖVIII/ 1200ՄՄ VWF 1-ական դեղափոշով ապակե սրվակ, 1-ական ապակե սրվակ լուծչով 15մլ, 1-ական ֆիլտրող/փոխանցող միջոց 20/20 դեղը (գրանցման հավաստագրի իրավատեր և արտադրող «CSL Behring GmbH, Emil-von-Behring-Strasse 76, 35041 Marburg, Germany»)

գրանցված է ԱյՍիԷյչ (ICH) անդամ երկիր Գերմանիայում (տեղեկությունը հասանելի է իրավասու մարմնի պաշտոնական կայքում 11.01.2023 թվականի դրությամբ, հղում՝ https://portal.dimdi.de/amguifree/am/docoutput/jpadocdisplay.xhtml?globalDocId=67104C6AD8734FE3A7599E8F08D1CC34&directdisplay=true&docid=8 տեղեկատվությունը ներկայացված է գերմաներն լեզվով, գրանցման համար 2416.01.00):

Տեղեկացնում եմ, որ ներկայացված դեղի ներդիր թերթիկի վերջին վերանայման ամսաթիվն է 2018 թվականի օգոստոս ամիսը, իսկ իրավասու մարմնի պաշտոնական կայքում առկա դեղի ներդիր թերթիկի և ընդհանուր բնութագրի վերջին վերանայման ամսաթիվ է նշված 2022 թվականի ապրիլ ամիսը:

Սույն տեղեկանքը վերաբերում է միայն ներկայացված փաթեթներով դեղին:

Փոխտնօրեն՝ Լիլիթ Ղազարյան

PharmaTech

10.01.2023
015/23F

ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2023/16 ծածկագրով
Բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին

«Ֆարմատեք» ՓԲԸ գլխավոր տնօրեն
Վահան Արուշանյանից
ք. Երևան, Ռաֆու փող. 111

ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2023/16 ծածկագրով բաց մրցույթի թիվ 1, 2, 3 չափաբաժիններին մասնակցության հայտ է ներկայացրել «Ֆարմատեք» ՓԲԸ-ն: Տեխնիկական սխալի արդյունքում վերոնշյալ չափաբաժիններով ներկայացված գնային առաջարկը սխալ է կազմվել, մասնավորապես չի ներառել դեղի տեղափոխման, մաքսազերծման հետ կապված ծախսերը, հարկերը և այլն, որի արդյունքում ընկերության աշխատանքի կողմից լրացված գնային առաջարկը հիմնավորված չի եղել:

Կանխավ շնորհակալություն

Հարգանքով

«Ֆարմատեք» ՓԲԸ գլխավոր տնօրեն Վ. Արուշանյան

«ՖԱՐՄԱՏԵՔ» PHARMATECH 01818051